# ԱՐՁԱՆԱԳՐՈւԹՅՈւՆ N4

**«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան, ՀՀ ԳՆ

12. 09. 2017թ.
ժամը՝ 16:30

**Հանձնաժողովի կազմ**

**Հանձնաժողովի նախագահ՝** Վ. Ղուշչյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Ա. Խաչատրյան
Ս. Պապյան
Խ. Աբաջյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Ա. Ապերյան

**I. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին**

(Վ. Ղուշչյան)

1. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթուղթը /Հավելված 6.1/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

**II. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին**

(Վ. Ղուշչյան)

1. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթուղթը և արդյունքում արձանագրվել հետևյալը.

Հավելված N 6.1-ով ներկայացված «տեխնիկական բնութագրերը» աղյուսակում Շրջադարձի շառավիղը ներկայացված է «մ, 5,3», իսկ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «տեխնիկական բնութագիրը» աղյուսակում՝ «մ, 6,0 – 6,9»:

Վերը նշվածի վերաբերյալ Վ. Ղուշչյանի, Ա. Խաչատրյանի և Ս. Պապյանի կողմից տրվեց հետևյալ հիմնավորումը.

Շրջադարձի շառավղի փոքրացումը դրական է՝ բարձրանում է ագրեգատի մանևրունակությունը, ավելանում արտադրողականությունը, նվազում շրջադարձային գոտու լայնությունը, վառելիքի ծախսը և աշխատածախսումները:

2. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

**III. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին**

(Վ. Ղուշչյան)

3.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել որակավորման գնահատման հետևյալ արդյունքները.

1. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ՝ <<բավարար>>

և ճանաչել ընտրված մասնակից՝ 1-ին չափաբաժնի մասով,

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը գործընթացը մտնում է անգործության ժամկետի մեջ, որի ավարտից հետո մասնակցին, սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում` կողմ` 4, դեմ 0:

Նախագահ` ---------------------------------------- Վ. Ղուշչյան

Անդամներ` ---------------------------------------- Ա. Խաչատրյան

---------------------------------------- Մ. Պապյան

---------------------------------------- Խ. Աբաջյան

Քարտուղար` ---------------------------------------- Ա. Ապերյան